



EU4Energy



31 հունիսի 2020թ.

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ

Ծրագիր «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» (EU4ASEP)
Ծրագրի անվանումը Դրամաշնորհ՝ ENI/2017/393-496

– Մասնագիտական ծառայություններ մատուցման աշխատանքային հրավեր՝ արևային ՖՎ կայանի կառուցման նախագծի ղեկավար ճարտարագետ

Ներածություն

Եվրոպական Միության «Քաղաքապետների դաշնագրի նախագծերի» EuropeAid/155713/DH/ACT/Multi դրամաշնորհային մրցույթի արդյունքում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ և «Համայնքների Միություն» ՀԿ համատեղ առաջարկը հավանության արժանացել էվրամիության կողմից, և կնքվել է դրամաշնորհի համաձայնագիր 718,000 եվրո արժեքով: Դրամաշնորհի ներքո ծրագիրը (ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի) մեկնարկել է 2018թ. փետրվարի 1-ին: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի համայնքներում կայուն Էներգետիկայի խթանմանը: Էներգախնայողության աջակցման հիմնադրամը սույնով հրավիրում է հայտեր՝ վերոհիշյալ ծրագրի շրջանակներում վարը բերված առաջադրանքի կատարման մասնագիտական ծառայությունների տրամադրման համար:

Առաջադրանքի նպատակը

Եվրոպական Միության դրամաշնորհային ծրագրով Էներգախնայողության աջակցման հիմնադրամը՝ «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» ծրագրի շրջանակներում Արթիկ համայնքում նախատեսվում է արևային կայանի շինարարություն:

Այս կապակցությամբ Ծրագրի թիմին անհրաժեշտ է մասնագետ, որը կաջակցի Արթիկում արևային կայանի նախագծային և շինարարական աշխատանքների որակի մասնագիտական վերահսկողություն և գործընթացների կառավարմանը՝ ժամկետների սահմաններում համապատասխան որակով աշխատանքների ավարտի ապահովման նպատակով:

Պարտականությունների նկարագրություն

Փորձագետը պատասխանատու է հետևյալ ծառայությունների համար.

- Նախագծման նախապատրաստական աշխատանքների (տեղանքի ուսումնասիրություն, երկրաբանական և բնապահպանական ռիսկերի վերհանում, և այլն) կատարման ամբողջականության հսկողություն,

- Նախատեսվող համակարգի ներկայացված տարբերակների քննարկումներին մասնակցություն, ուժեղ և թույլ կողմերի վերհանում, օպտիմալ տարբերակի ընտրության աջակցություն,
- Արևային համակարգի և դրա բաղադրիչների նախագծման աշխատանքների, տեխնիկական լուծումների, առաջարկվող նյութերի արտադրողականության, հուսալիության, անվտանգության, ոլորտի լավագույն ստանդարտներին համապատասխանության վերահսկում, գծագրերի և մասնագրերի որակի ապահովում,
- Իրականացնել շինարարական փաստաթղթերի հսկողություն,
- Պետական գերատեսչություններում իրավական գործընթացների սահուն իրականացման աջակցություն,
- Շինարարական աշխատանքների նախապատրաստման, իրականացման և փորձարկման փուլերի կազմակերպման աջակցություն,
- Տեղանքի այցելություններ նախապատրաստման և շինարարության փուլերում,
- Համագործակցություն EU4ASEP ծրագրի տեխնիկական անձնակազմի և ԵՄ աջակից թիմի մասնագետների հետ՝ նախագծման ընթացիկ արդյունքների, շինարարության, փորձարկման և հանձնման վերահսկողության գործում,
- Իրականացնել նախագծման, լիցենզավորման և շինարարական աշխատանքների առաջադիմության հսկողության

Պահանջվող որակավորումները.

- Բարձրագույն ճարտարագիտական կրթություն
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ ՀՀ էներգահամակարգում
- Առնվազն 1 նմանատիպ կայանի նախագծման և շինարարության գործընթացների կառավարման փորձ

Հայտերի գնահատումը կիրականցվի մասնագիտական որակավորման և նմանատիպ աշխատանքների կատարման փորձի հիման վրա:

Հետաքրքրված թեկնածուները ներկայացնեն իրենց աշխատանքային կենսագրականները (Curriculum Vitae/Resume) վարը բերված էլ.փոստի հասցեներով մինչև **ա/թ օգոստոսի 14-**

Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

Գրանցման հասցեն՝ 92-29 Ձրաշատ փ, Երևան 0019

Ֆիզիկական հասցե՝ Էլիտ Պլազա, գրասենյակ # 414, Երևան 0002

Պետ.գրանցման համար՝ 222.160.00218, ԳՎՀՅ՝ 00081855

Էլ.փոստի հասցե՝ apasoyan@esfarmeria.org, astghine@gmail.com

Հեռ՝ +374 (0)93.611.619; +374(0)93.930.030